# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 դեկտեմբերի 2025 թվականի № 495-Ա**

## ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2025 թվականի դեկտեմբերի 16-ի № Ն/1666-2025 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Ստեփան Բաղդասարյանին*** 2025 թվականի դեկտեմբերի 17-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց», «Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց», «Բջնիի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» և «Արագյուղի «Տիգրանակերտ կրթարան» միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր տեղերի հավակնորդների հետ հարցազրույց անցկացնող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. ***Ստեփան Բաղդասարյանի*** գործուղման վայր փոխադրումը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված «***TOYOTA CAMRY 2.5 GAS***» մակնիշի ***908 HI 61*** ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի դեկտեմբերի 16**
**ք. Հրազդան**